ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը Հայաստանի Առաջին Հանրապետության տոնի առթիվ.

Սիրելի հայրենակիցներ, ուղիղ 107 տարի առաջ հայ ժողովրդի քաջարի զավակները կենաց-մահու պայքարի ելան հայությանը բնաջնջելու եկած գիշատիչ բանակների դեմ ու արյան գնով նվաճեցին մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը: Թեեւ Հայաստանի Առաջին Հանրապետությունն ընդամենը երկուսուկես տարվա կյանք ունեցավ, սակայն կարողացավ պահպանել իր պատմական առաքելությունը, քանի որ նրա հիմքի վրա բարձրացան Հայաստանի Երկրորդ ու Երրորդ Հանրապետությունները:

Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի ճակատամարտերի օրերին Գեղարքունյաց աշխարհում եւս հայրենի հողի ազատության համար ծանր, բայց հաղթական մարտեր են մղել մեր պապերը՝ փրկելով այս մի բուռ հայրենիքը ոսոխի ճիրաններից: Եվ մենք միշտ հիշում ու խոնարհվում ենք մեր հերոսների սուրբ հիշատակի առաջ, պարտավորվում միշտ շեն ու նորոգ պահել, ծաղկեցնել ու հզորացնել մեր հայրենիքը:

Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման տոնի առթիվ, մաղթում խաղաղություն, քաջառողջություն, անսպառ հաջողություններ, անսահման երջանկություն, համազգային իղձերի իրականացում:

Լավագույն ցանկություններով՝
ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար
Հովհաննես Հովեյան